Յուրաքանչյուրի **կյանքի իրավունքը** պաշտպանվում է **օրենքով**

- **Յուրաքանչյուր ոք ունի կյանքի իրավունք:**
- **Կյանքի իրավունքը մարդու ապրելու իրավունքն է:**
- **Որևէ մեկը, այդ թվում՝ պետությունը, չի կարող մարդուն ապօրինի զրկել կյանքից:**
- **Անձի խնդրանքով և կարեկցանքի շարժառիթով կյանքից զրկելը**
- **Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է հանցագործություն:**
- **Մահապատժի կիրառումը Հայաստանի Հանրապետությունում արգելվում է:**

Որտե՞ղ է ամրագրված կյանքի իրավունքը

- 1948 թ. Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր
- 1950 թ. Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին կոնվենցիա
- 1966 թ. Քաղաքական և քաղաքացիական իրավունքների մասին միջազգային դաշնագիր
- Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

Կյանքի իրավունքի պաշտպանության ոլորտում պետությունը պարտավոր է՝

- պաշտպանել իր իրավազորության ներքո եղող մարդկանց կյանքը.
- չսահմանափակել կյանքի իրավունքը արտակարգ կամ ռազմական դրության ժամանակ:

1.

Զորակոչի ժամանակ պետությունը պարտավոր է՝

- իրականացնել զորակոչի ենթակա քաղաքացիների առողջական վիճակի հետազոտում և բժշկական փորձաքննություն.
- եթե առողջական վիճակի պատճառով քաղաքացին պիտանի չէ զինվորական ծառայության համար, տարկետում տալ.
- տրամադրել առաջնահերթ և անվճար բժշկական օգնություն:

2.

Զինվորական ծառայության ժամանակ պետությունը պարտավոր է՝

- զինծառայողներին վերաբերվել որպես համազգեստով քաղաքացիների, որոնք օգտվում են միևնույն իրավունքներից և հիմնարար ազատություններից, ինչ մյուս քաղաքացիները.
- ապահովել մահվան դեպքերի պատշաճ քննությունը.
- պաշտպանել անձին այլ անձանց բռնությունից, ինքն իրեն վնաս պատճառելուց, ինչպես նաև կանխատեսելի բնական աղետների ժամանակ, երբ իշխանությունները գիտեին կամ պարտավոր էին իմանալ իրական և անմիջական ռիսկի մասին.
- պատշաճ բժշկական օգնություն և սպասարկում տրամադրել կյանքին վտանգ սպառնացող անհետաձգելի դեպքերում, ինչպես նաև ապահովել անվտանգությունը համավարակների և համաճարակների, օրինակ՝ նոր Քովիդ–19 կորոնավիրուսի ժամանակ.
- արագ և պատշաճ արձագանքել զինծառայողների առողջական գանգատներին, ապահովել պատշաճ սնունդ և կյանքի համար անվտանգ ծառայության պայմաններ:

3.

Կյանքի իրավունքը բացարձակ չէ

Ներպետական և միջազգային փաստաթղթերը սահմանում են այն բացառիկ դեպքերը, երբ կյանքից զրկելը չի համարվում կյանքի իրավունքի խախտում. օրինակ՝ պատերազմի կամ ազգի կյանքին սպառնացող այլ արտակարգ դրության ժամանակ, պայմանով, որ գործողությունները համապատասխանեն միջազգային իրավունքով ստանձնած պարտավորություններին:

Ո՞ւր կարելի է դիմել իրավունքի խախտման դեպքում

Իր կամ որևէ այլ զինծառայողի իրավունքը, այդ թվում՝ կյանքի իրավունքը խախտելու դեպքում կամ իրավունքի հնարավոր խախտումը կանխելու նպատակով ցանկացած զինծառայող կարող է դիմել՝

- ՀՀ ոստիկանության ☎ **թեժ գիծ (102)**,
- ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի ☎ **թեժ գիծ (116)**,
- ՀՀ պաշտպանության նախարարության մարդու իրավունքների և բարեվարքության կենտրոնի ☎ **թեժ գիծ (128)**,
- ՀՀ ՊՆ ՌՈ ☎ **թեժ գիծ (188)**,
- ՀՀ զինված ուժերի գլխավոր շտաբի վստահության գիծ ☎ **(85–01, 85–02 և 85–03)**:

* **Սույն պաստառը տեղեկատվական բնույթի է և շարադրված է հանրամատչելի լեզվով: Կյանքի իրավունքի վերաբերյալ իրավական ձևակերպումներին ծանոթանալու և առկա իրավակարգավորումների վերաբերյալ պարզաբանումներ ստանալու համար դիմել զորամասի հրամանատարի սոցիալ–իրավական աշխատանքների գծով օգնական–սպային:**

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԿԱՆԱՅՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՉԻՆՎԱԾ ՈՒԺԵՐՈՒՄ

ՀԱՅԱՍՏԱՆ ԶԻՆՎԱԾ ՈՒԺԵՐ

Ծրագրի միջոցառում, որն իրականացվում է Եվրոպայի խորհրդի՝ Հայաստանի համար 2019–2022 թթ. գործողությունների ծրագրի շրջանակում:

COUNCIL OF EUROPE
CONSEIL DE L'EUROPE